ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26/4/1

15 սեպտեմբերի 2026 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 32 անդամներ:

Բացակա էր՝ Վարդան Ղուկասյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավարին փոխարինող՝ Ավետիս Առաքելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի ղեկավար՝ Կարեն Մալխասյանը

Նախքան օրակարի հաստատելը նիստը վարողը տեղեկացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ Սարիկ Մինասյանը, Քնարիկ Հարությունյանը ներկայացրել են՝ ավագանու անդամի իրենց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմում, որի հիմքով, համաձայն 2026թ. հուլիսի 23-ի N 24 և N 25 արձանագրությամբ վաղաժամկետ դադարեցվել են նրա՝ ավագանու անդամի լիազորությունները :

Հայաստանի Հանրապետության թիվ 31 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2026թ. N 10 և N 12 արձանագրությունների համաձայն ավագանու անդամի մանդատները տրվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ Կարեն Թորոսյանին և Անժելա Մաթոսյանին:

Տեղեկացնեմ նաև, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ներկայացված գրության համաձայն խմբակցության նոր ղեկավար է հանդիսանում Շավարշ Արամյանը, իսկ քարտուղարը՝ Էդգար Բաղդասարյանը:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 133-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՐԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 15-ի N 96-Լ որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 83-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարների գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի սեպտեմբերին՝ Զ/1859, Զ/1863, Զ/1862, Զ/1868, Զ/1874 թվագրումներով)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի՝ ավագանու հինգ անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հաստատել Հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝
1) Անանյան Լուսինե - «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» խմբակցություն,
2) Էմմա Բարսեղյան - «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
3) Ադամյան Սվետլանա-«Մեր քաղաքը» խմբակցություն,
4) Մոսոյան Սուսաննա - «Իմ հզոր համայնք» խմբակցություն,
5) Մուրադյան Աննա -«Մայր Հայաստան» խմբակցություն :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետով ստեղծված Հանձնաժողովի անդամներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -30 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 134-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ն որոշման 3-րդ կետը, 2022 թվականի հունիսի 22-ի N 105–Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 167-Ա որոշման 3-րդ կետով N 2հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու խնդրանքով համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը համայնքային ծառայողների մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան

փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ընդունվելիք իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, իսկ տեխսպասարկման անձնակազմի մասով՝ որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -17	Դեմ -0	Ձեռնպահ -13
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ		Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ		Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		Լ. ԱՆԱՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ		Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ		Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ		Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ		Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ		Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ		Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ		Վ. ԴԱՎԹՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ		Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ		Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ		Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ		
Ս. ՄՈՍՈՅԱՆ		
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ		
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ		

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 135-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արևիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի գրությունները՝ ուղղված

Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2026 թվականի հունիսի 26-ին 11109, հուլիսի 23-ին 9786, օգոգստոսի 20-ին 14878, թվագրություններով)՝
1. Կազմակերպությանը որպես դրամաշնորհ հատկացնել 943 700 (ինը հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ անվտանգության, գազասպառման հակահրդեհային համակարգեր, ներտնային շինմոնտաժային աշխատանքների ազդանշանային համակարգեր ձեռք բերելու համար:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4637) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրենին իրազեկելու հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -30 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 136-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Գյումրու կոմունալ ծառայություն>> համայնքային բյուջետային հիմնարկին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Բազմաֆունկցիոնալ ամբարձիչ Liugong CLG 385B մակնիշի 7503ԼԼ պետհամարանիշի ավտոմեքենան:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել սույն որոշման 1-ին կետում նշված ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հաշվապահական ձևակերպումները:
3. Անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հետ կապված գործընթացի կազմակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին :
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -30 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 138-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 7 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և յոթհամայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) գրություններն՝ ուղղված համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2026 թվականի31-ը օգոստոսի N15558, 1-ը սեպտեմբերիN 15597,N 15599 և N 15659, 4-ը սեպտեմբերի N 15845,

08-ը օգոստոսի N15313 և 25-ը N 15219 օգոստոսի թվագրություններով).Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի համայնքի ավագանինորոշում է.
1.Կազմակերպություններինգույքի,ընթացիկ վերանորոգման, ջեռուցման նպատակով վառելափայտի ձեռքբերմաննպատակով, որպեսընթացիկ դրամաշնորհներ կազմակերպություններինհատկացնել 3 241 300 (երեք միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետությանդրամ՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանիաշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարելՀայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի 8/1/1, 8/2/3 և 8/2/2գործառական(4637) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքայնքների ոչ առևտրային կազմակերպություններին»տնտեսագիտական դասակարգմանհոդվածից՝օրենքով սահմանված կարգով՝ համաձայն հավելվածի: 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպություններիտնօրեններինպատշաճիրազեկելուօրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -31 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 137-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ԻՆՈՀԱԲ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

«Ինոհաբ» երիտասարդական հասարակական կազմակերպությունը «BALATON AI» կրթական և տեխնոլոգիական կենտրոնի հետ համագործակցությամբ նախաձեռնում է իրականացնել «Ինտերակտիվ Գյումրի» աշխատանքային անվանումով փորձնական նախագիծը, որի շրջանակում նախատեսվում է ստեղծել ծրագրավորվող FPV դրոնի, տեսախցիկների, տեղային հաշվարկային հանգույցի և արհեստական բանականության տարրերի վրա հիմնված ինտերակտիվ խաղային համակարգ: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, 10-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի զեկուցագիրը, «Ինոհաբ» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ՝ Անի Մարգարյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի օգոստոսի 08-ին N 14353 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. «Ինոհաբ» երիտասարդական հասարակական կազմակերպությանը՝ որպես նվիրատվություն, հատկացնել 600 000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ «Ինտերակտիվ Գյումրի» աշխատանքային անվանումով փորձնական նախագիծը կազմակերպելու և իրականացնելու համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ինոհաբ» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահին՝ պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -30 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 139-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐՎԱԾ

ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և <<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունն հանդիսացող <<Գյումրու ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման տրված ավտոբուսների պարտադիր ապահովագրության նպատակով հատկացնել 8 820 000(ութ միլիոն ութ հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (4215) <<Ապահովագրական ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից օրենքով սահմանված կարգով:
3. Սույ որոշման 1-ին կետում նշված գումարը հատկացնել <<Գյումրու ավտոբուս>> փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջե մուտքագրելուց հետո:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 140-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ19-Ի N 166-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի3-րդկետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1485-Ն և 2023թվականի մարտի 9-ի N 301-Ն որոշումների դրույթներով և հիմք ընդունելով Հյաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 02.1//06692-2026թվականիգրությունը՝**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 283-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 166-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները. 1) որոշման 2-րդ կետիNN 16,17,18,19,20,21,22,25 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1-8 հավելվածների, 2) որոշման 3-րդ կետիNN34-57հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝համաձայն NN9-32հավելվածների:
2. Սույն որոշումնուժի մեջհամարել 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 141-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի

06-ի№119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8-րդ կետի2-րդ ենթակետի դրույթներով՝**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. «Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա»մարզական միջոցառմանմրցումները պատշաճ կազմակերպման և անցկացման նպատակով մրցավարների ծառայությունների դիմաց հատկացնել155 800(մեկ հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստինսույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 142-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ» ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետի ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու օր» ամենամյա տոնակատարությանը նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 17 000 000 (տասնյոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -22	Դեմ -0	Ձեռնպահ -5
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ		Ս. ԱԴԱՄՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ		Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ		Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ		Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ		
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ		
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ		
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ		

Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 144-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 9-րդ և 14-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Համաձայնություն տալ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող«Տեղական զարգացման հիմնադրամ»ի շրջանակներում «Համայնքների կարողությունների բարելավում էներգաարդյունավետության եվ վերականգնվող էներգիայի ոլորտում» նախաձեռնությանը մասնակցելուն եվ համաֆինանսավորումը ապահովելուն:
2. Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեիցկատարել համայնքային ներդրում ծրագրի ընդհանուր բյուջեի 32 000 000 (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամի 20 տոկոսի չափով՝ 6 400 000 (վեց միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Սուրբ Մարիամ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի տանիքին արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության արդիականացման նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -29 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 143-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԸ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՋԵԿ. ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում անօթևանության հարցի լուծմանը նպաստելու, համայնքի բնակչության բնակապահովման խնդիրները կանոնակարգելու, համայնքապետական բնակարանային ֆոնդը արդյունավետ և արդարացի տնօրինելու նպատակով և ղեկավարվելով Հայաստանի կառավարության 1997 թվականի մարտի 14-ի №51 որոշման, քաղաքացիական օրենսգրքի 129-րդ, 166-րդ, 169-րդ,187-րդ,466-րդ,467-րդ, 594-596-րդ, 606-612-րդ, հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 3-րդ, 7-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի 20-րդ մասի,18-րդ հոդվածի 1-ին մասի 21–րդ կետի, 35-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 37-րդ և 38-րդ հոդվածների դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նվիրատվության եղանակով օտարելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք.

● մինչև 1998թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները նվիրատվության եղանակով օտարելու դիմում չեն ներկայացրել

● 1998թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ և օրդերավորվել

2. Սույն որոշմամբ սահմանված վարչարարություն սահմանելիս՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները նվիրատվության կարգով տվյալ բնակարանի վարձակալին և նրա ընտանիքի անդամներին օտարելու իրավական հարաբերություններում (վարչական և քաղաքացիական) վարձակալի իրավունքները տարածել նաև այն անձանց վրա,ովքեր թեկուզև օրենքով սահմանված կարգով վարձակալ չեն ճանաչվել կամ առկա չեն այդ հանգամանքը ապացուցող փաստաթղթեր, սակայն առնվազն վերջին 10(տաս) տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ տիրապետում և օգտագործում են այդ բնակարանը. այդ մասին առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցներ, սեփականության իրավունքով չունեն այլ բնակելի տուն կամ բնակարան և հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի և եթե այդ բնակարանը ծանրաբեռնված չէ այլոց իրավունքներով, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կիրառված չեն սահմանափակումներ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները, որոնք մինչև Քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը (01 հունվարի 1999 թվական) օրենքով սահմանված կարգով հատկացվել են օրդերով, սակայն ակնհայտ լքված են և առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցներ՝ առնվազն վերջին 10(տաս) տարիների ընթացքում այդ բնակարանի վարձակալի և նրա ընտանիքի անդամների կողմից այդ բնակարանը ակնհայտ լքելու վերաբերյալ, ապա համայնքի ղեկավարը վարչական կարգով կարող է ուժը կորցրած ճանաչել այդ իրավունքները վերապահող վարչական ակտը, օրդերը և լուծել համապատասխան վարձակալության պայմանագիրը դրա առկայության դեպքում:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները, որոնք Քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո վարչական կարգով հատկացվել են քաղաքացիներին վարձակալության իրավունքով, սակայն այդ իրավունքները օրենքով սահմանված կարգով պետական գրանցման չեն ենթարկվել, ներառյալ կնքվել է վարձակալության պայմանագիր, սակայն պայմանագիրը չի ստացել նոտարական վավերացում և պետական գրանցում և օրենքով սահմանված կարգով համարվում է առոչինչ, ինչպես նաև առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցներ այն մասին որ այդ բնակարանը ակնհայտ լքված է վարչական կարգով իրավունք ստացած և իրավունքները պետական գրանցման չներկայացրած անձանց կողմից, ապա համայնքի ղեկավարը վարչական կարգով կարող է չեղյալ ճանաչել այդ իրավունքները վերապահող վարչական ակտը, իսկ պետական գրանցում չստացած վարձակալության պայմանագիրը և օրդերը համարել առոչինչ:

5. Սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթների հարուցման վերաբերյալ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված պատշաճ ծանուցման եղանակներով վարչական ակտերի հասցեատերերին ծանուցելու անհնարինության դեպքում վարույթը կարող է անցկացվել վարչական ակտի հասցեատիրոջ բացակայությամբ և ընդունվել միջամտող վարչական ակտ, եթե համապատասխանաբար 4-րդ կետով սահմանված դեպքում առկա է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ տվյալ վարչական ակտի հասցեատիրոջը անհայտ բացակայող, կամ մահացած ճանաչելու վերաբերյալ:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները, որոնք Քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո վարչական կարգով հատկացվել են քաղաքացիներին վարձակալության իրավունքով անորոշ ժամկետով և այդ իրավունքները օրենքով սահմանված կարգով ստացել են պետական գրանցում, նվիրատվության կարգով կարող են օտարվել այդ իրավունքը գրանցած անձանց, պետական գրանցման օրվանից առնվազն 1(մեկ) տարի հետո, եթե առկա չեն սույն որոշման 2-րդ կետով սահմանված ավելի շուտ օտարելու հիմքերը:

7. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի №46-Ա, 2010 թվականի մարտի 22-ի 55-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 6-ի 133-Ա որոշումները:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳՋԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱՋԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 145-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ 47 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ №23 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԳԱԳԻԿ ՌԱՖԻԿԻ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆԻՆ, ԼԱՐԻՍԱ ՀԵՆՐԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ,ԱՆԻ ԳԱԳԻԿԻ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆԻՆ ԵՎ ՄՈՆԻԿԱ ԳԱԳԻԿԻ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Գագիկ Ռաֆիկի Մուղդուսյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին հասցեագրված 2026 թվականի սեպտեմբերի 11-ի №16358-26 թվագրմամբ դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է. 1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Ղանդիլյան փողոց 47 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքից №23 սոցիալական բնակարանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել քաղաքացիներ Գագիկ Ռաֆիկի Մուղդուսյանին, Լարիսա Հենրիկի Հովհաննիսյանին, Անի

Գագիկի Մուղդուսյանին և Մոնիկա Գագիկի Մուղդուսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գագիկ Ռաֆիկի Մուղդուսյանին, Լարիսա Հենրիկի Հովհաննիսյանին, Անի Գագիկի Մուղդուսյանին և Մոնիկա Գագիկի Մուղդուսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -25 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 146-Ա)*

ԼՍԵՑԻՆ

(Զեկ. ՀՈՎԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-

ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ 1-ին կետով սահմանված կարգի 4-րդ բաժնի 34.2-րդ, 35-րդ կետերի, նկատի ունենալով, որ հավելվածում նշված շինությունները և հողամասերը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չեն տրամադրել մրցույթով, հիմք ընդունելով սույն որոշման հավելվածներում նշված դիմումատուների կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շինություններին հարակից, բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասերում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, շինությունները և դրանց պահպանման և սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վարձակալության տրամադրել տվյալ շինությունները կառուցած քաղաքացիներին և սահմանել վարձավճարի չափ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՐԱԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՀԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Հովհաննես Վահանի Հարությունյանը, ով հանդիսանում է մահացած պապի՝ Հարություն Մուրադի Հարությունյանի ժառանգը (հիմք՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր, գրանցված գրանցամատյանում թիվ 4909) դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ իր պապի անվամբ հաշվառված և ժառանգության իրավունքով իրեն պատկանող «ԱՈՒԴԻ 90» (AUDI 90) մակնիշի, 10 LO 770 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2012 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Տրանսպորտային միջոցը, որը հաշվառված է Հարություն Մուրադի Հարությունյանի անվամբ և ժառանգության իրավունքով պատկանում է Հովհաննես Վահանի Հարությունյանի անվամբ, չի շահագործվել և 2013 թվականի դեկտեմբերի 28-ից գտնվում է պետական հաշվառումից հանված լինելու կարգավիճակում:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»

օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հովհաննես Վահանի Հարությունյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի, Նար-Դոսի փողոց տուն 2 հասցեում, հանրային ծառայությունների համարանիշ 1702900681) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2026 թվականի օգոստոսի 17-ին N14669 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Սահմանել արտոնություն Հարություն Մուրադի Հարությունյանի անվամբ հաշվառված և ժառանգության իրավունքով Հովհաննես Վահանի Հարությունյանին պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2012 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 66.059 (վաթսունվեց հազար հիսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից տույժը 2012 թվականի հունվար ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 46.786 (քառասունվեց հազար յոթ հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 19.273 (տասնինը հազար երկու հարյուր յոթանասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Վահանի Հարությունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 147-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՂԱՐԻԲ ԽԱՉԻԿԻ ԱՐԱՍԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղարիբ Խաչիկի Արասխանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՋ ՍԻԷԼԷՍ 550» (MERCEDES-BENZ CLS 550) մակնիշի, 37 CR 469 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2024 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

2023 թվականի հուլիսի 02-ին տեղի ունեցած պատահարի ժամանակ տրանսպորտային միջոցի վրա կրակել են, որի ղեկին եղել է Ղարիբ Խաչիկի Արասխանյանի տղան՝ Խաչատուր Ղարիբի Արասխանյանը, հարուցվել է քրեական գործ և տրանսպորտային միջոցը որպես իրեղեն ապացույց տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի հատուկ պահպանվող տարածք, որտեղ մնացել է մինչև 2024 թվականի սեպտեմբերի 24-ը, որի պատճառով չի վճարվել գույքահարկի գումարը՝ սկսած 2024թվականի հունվար ամսից (հիմք՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ՍԴ1/0124/01/23, ԴԴԱ-17-190 գրությունը, տրված 2024 թվականի սեպտեմբերի 24-ին, միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի եզրակացությունը Խաչատուր Ղարիբի Արասխանյանի առողջական վիճակի վերաբերյալ, Ղարիբ Խաչիկի Արասխանյանի առողջության վերաբերյալ եզրակացությունը, Ղարիբ Խաչիկի Արասխանյանի մեծահասակնակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը, թվով հինգ լուսանկարներ):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Ղարիբ Խաչիկի Արասխանյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Սարգսյան փողոց 62 տուն հասցեում, սոցիալական ապահովության քարտ

2201580316) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2026 թվականի սեպտեմբերի 01-ին N 15634 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Ղարիբ Խաչիկի Արասխանյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2024 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 237.880(երկու հարյուր երեսունյոթ հազար ութ հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը կազմում է 162.000 (մեկ հարյուր վաթսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 75.880 (յոթանասունհինգ հազար ութ հարյուր ութսուն)Հայաստանի Հանրապետության դրամ: 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ղարիբ Խաչիկի Արասխանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -24 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Խ. ՄԵԼԻՔՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Կ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. Մ.ՄԱԹՈՍՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 148-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ԹԱԴԵՎՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)

Միքայել Թադևոսի Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող «ՊԵԺՈՏ 605» (PEUGEOT 605) մակնիշի, 35 RL 479 հաշվառման համարանիշով (հիմք՝տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 06BB620977, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր N KG620987) տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2018 թվականի մայիս ամսից մինչև 2026 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

